Արդյո՞ք Դուք կամ Ձեր երեխան ձեռք եք տվել, համտեսել կամ շնչել մի բան, որը կարող է վնասակար լինել։

Կալիֆորնիայի
Թունավորման դեպքերի թեժ գիծ
1-800-222-1222
Կալիֆորնիայի Թունավորման
Վերահսկման համակարգի ծառայություն

CALIFORNIA POISON CONTROL SYSTEM

Մի ենթադրեք։ Վստահ եղեք։

Ի՞նչ է թույնը։

Թույնը վնասակար մի նյութ է, որին դուք կարող էք ձեռք տալ, համտեսել կամ շնչել։

Զանգահարեք թունավորման մասնագետներին, եթե դուք որեւէ խնդիր կամ հարց ունեք։

Մայրերն ու բժիշկները վստահում են մեզ – մենք Կալիֆորնիայի թունավորման վերահսկման կենտրոնն ենք։ Մենք ամեն օր օգնում ենք բժիշկներին, հիվանդանոցներին, բուժքույրերին, 911-ին եւ ձեզ նման մարդկանց։ Կալիֆորնիայի թունավորման վերահսկման համակարգը 1997թ.-ից ձեր տեղական թունավորման վերահսկման կենտրոնն է եւ Սան Ֆրանցիսկոյում Կալիֆորնիայի համալսարանի դեղագործական դպրոցի մի բաժինը։

"Շատ անհարմա՞ր պիտի զգամ, եթե անտեղի զանգահարեմ"։

Եթե դուք մասնագետ չեք, դուք չեք կարող ամեն ինչ իմանալ ձեզ կամ ձեր ընտանիքին վնասող բոլոր բաների մասին։ Դուք ընդամենը կարող եք թունավորման մասնագետներին զանգահարել։

Մասնագետ

Դեղագործների, բուժքույրերի եւ վերապատրաստված մասնագետների մեր անձնակազմը կպատասխանի ձեզ։

Անձնական

Ձեր անձնական տեղեկությունը ոչ մեկին չի տրվի։ Մենք ձեր անունը եւ հեռախոսահամարը հարցնում ենք, որպեսզի կրկին զանգահարենք եւ վստահ լինենք, որ դուք լավ եք զգում։

Անվճար

Երբեք չեք վճարի եւ դուք կարող եք զանգահարել, երբ դրա կարիքը զգաք։

Արագ

Մենք այստեղ ենք օգնելու ձեզ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, տարին 365 օր։ Հեռախոսը երբեք զբաղված չէ եւ դուք չեք սպասի։

Ի՞նչ անել, եթե մոտակայքում հեռախոս չկա։

Ահա առաջին օգնության մի քանի տեղեկություն, եթե չեք կարող անմիջապես մեզ զանգահարել։ Բայց դա չի կարող փոխարինել մեր մասնագետներից մեկի հետ խոսելուն։ Հեռախոս ունենալու առաջին հնարավորության դեպքում անմիջապես զանգահարեք մեզ, **1-800-222-1222**

Մաշկի թունավորում

10 րոպե մաշկը պահեք հոսող ջրի տակ, հետո օճառեք եւ լվացեք։

Աչքի թունավորում

15 րոպե աչքը պահեք հոսող ջրի տակ։ Կոպը բացելու համար ուժ մի գործադրեք։

Շնչառական թունավորում

Թունավորված անձին անմիջապես հանեք թարմ օդ շնչելու։ Գոլորշին մի շնչեք։ Բացեք դռներն ու պատուհանները։

Կուլ տալով թունավորում

Մի թողեք անձը հետ տա, ուտի կամ խմի որեւէ բան։

Ինչպես է 1-800-222-1222 աշխատում ձեր եւ ձեր ընտանիքի համար գիշեր եւ ցերեկ

1 Մի՛ ենթադրեք։ Վստա՛հ եղեք։

Որեւէ մեկը կարող է համտեսած, ձեռք տված կամ շնչած լինել մի բան, որը կարող է վնասել իրեն։ Արդյոք դա թո՞ւյն էր։

2 Զանգահարեք 1-800-222-1222։

Ձեր հեռախոսազանգին կպատասխանեն առաջին զանգից։ Դուք կլսեք 17 վայրկյանանոց ուղերձ, մինչեւ կմիացնենք ձեզ թունավորման մեր մասնագետներից մեկի հետ։

3 Ասացեք "ՀԱՅԵՐԵՆ"։

Եւ մենք անմիջապես թարգմանիչ կտրամադրենք ձեզ՝ մասնագետի հետ խոսելու համար։

4 Ի՞նչ պատահեց։

Մասնագետին հնարավորին չափ ամբողջական պատմեք պատահածը։ ("Իմ երկու տարեկան երեխան պայուսակիցս շպար հանեց եւ կերավ")։

5 Արդյոք դա դե՞ղ էր, բո՞ւյս, միջա՞տ, թե՞ մաքրող հեղուկ։

Եթե դա մաքրող հեղուկի, ախտահանիչի կամ դեղի նման մի բան էր, ապա այն ունեցեք ձեզ հետ, երբ զանգահարեք։ Եթե այն բույս էր, օձ կամ սարդ, ապա պատրաստ եղեք նկարագրելու այն։

6 Ի՞նչ է պատահում։

Մենք կուզենանք իմանալ, թե ինչպե՞ս է իրեն զգում անձը։ ("Նախապես նա լալիս էր, բայց հիմա նա լավ է երեւում")։

7 Մենք կօգնենք ձեզ։

Մեծ մասամբ կարող ենք օգնել հարցը կարգավորել միայն մեկ հեռախոսազանգով։ Եթե անհրաժեշտ գտնենք, որ դուք գնաք շտապ օգնության սենյակ, մենք կզանգահարենք նրանց՝ տեղեկացնելու, որ դուք գալիս եք, այնպես որ այնտեղ չեք սպասի։

8 Կուզենանք վստահ լինել, որ ամեն ինչ լավ է։

Հաճախ մենք ձեզ ետ կզանգահարենք, վստահ լինելու համար, որ դուք լավ եք։ Մենք նաեւ ուրախ կլինենք պատասխանելու հավելյալ հարցերի։ Անվճար եւ գաղտնապահ։

1-800-222-1222 Այցելեք մեր կայքէջը **www.calpoison.org**

CALIFORNIA POISON CONTROL SYSTEM, UCSF SCHOOL OF PHARMACY, DEPARTMENT OF CLINICAL PHARMACY

ARMENIAN